

---

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԵՎԵՐԸ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

### ԱՇԽԵՆ ԶՐԲԱՇՅԱՆ

Եղիշե Չարենցից հետո՝ 1940-1960-ական թթ., արևելահայ պոեզիայում, բանաստեղծության տնային (ստրոֆիկական) կառուցվածքի հանդեպ վերաբերմունքն սկսում է աստիճանաբար փոխվել՝ հասմելով ընդհուած հին ձևերի հետ կտրուկ խզման: Եթե Տերյանի, այնուհետև Չարենցի ստեղծագործության մեջ նկատելի է հստակ միտվածություն՝ յուրացնելու և ազգային բանաստեղծության մեջ ներմուծելու արևմտյան և արևելյան պոեզիայի այնպիսի կայուն ձևեր ու տեսակներ, ինչպիսիք են գագելը, բեյթը, ռուբային, դիստիքոսը, մուխամմազը, սոնետը, տրիոլետը, ռոնդոն և այլն, ապա սկսած XX դարի 40-ական թվականներից՝ այս ձևերն սկսում են կտրուկ նահանջ ապրե՝ պայմանավորված նոր ժամանակների ոգու և գեղարվեստական պահանջներով: Իհարկե, այս շրջանի «նահանջը» չի կարելի նույնացնել 20-ական թթ. «Ժխտողական» տրամադրությունների հետ, երբ պոետներից շատերը (նույն ինքը՝ Ե. Չարենցը, Ա. Վշտունին, Գ. Արովը և ուրիշներ) ամբողջովին համակված էին դասական պոեզիայի ձևերի ժխտման պաթոսով, և ոչ միայն բանաստեղծության կայուն ձևերը, այլև սովորական տնային կառուցվածքներն անգամ (ասենք՝ պարզ քատրենները կամ երկտող տները) նրանց երկերից գրեթե օտարված էին:

Այս անգամ տեսնում ենք բոլորովին այլ պատկեր. նոր ժամանակների շունչը պահանջում էր հրաժարում ավանդական ձևերից, նոր բովանդակությունը որոնում էր կառուցվածքի առումով ավելի «չեզոք» դրսնորուններ: Ժամանակի ընթերցողը նույնպես կարծես փոխել էր իր պահանջները բանաստեղծության հանդեպ. նա այնտեղ որոնում էր ոչ այնքան ձևի հղվածություն ու ինքնատիկ «խաղեր», որքան նոր և թարմ բովանդակություն: Կարելի է վստահորեն պնդել, որ այդ երևույթները ուղղակիորեն պայմանավորված էին ռուսական պոեզիայում նույն ժամանակաշրջանում առկա միտումներով: Խոսելով հետսահմվոլիստական շրջանի ռուսական ուսանավորի ստրոֆիկական կառուցվածքի մասին՝ Ս. Լ. Գասպարովը գրում է. «Ստրոֆիկայի ասպարեզում ամենառաժեղ կերպով դրսնորվեց նոր դարաշրջանի միտվածությունը պարզության և կարգավորվածության: Ստրոֆիկական ձևերի՝ նախորդ շրջանում բուռն կերպով դրսնորված հարստությունը դառնում է ավելորդ. հազվագյուտ տների և կայուն ձևերի բովանդակային զուգորդումները չեն ընկալվում ընթերցողների մեջ մասի կողմից»<sup>1</sup>: Եվ իրոք, բանաստեղծական ասելիքի բազմազանությունը ձգտում էր ավելի պարզ և չեզոք ձևերի. դա մի կողմից աստրոֆիզմն էր (ապա տնային կառուցվածքը), մյուս կողմից՝ պարզունակ տնային կառուցվածքը:

<sup>1</sup> Գասպար Մ. Լ. Օчерк истории русского стиха. М., 1984, с. 291.

Ղիտարկելով XX դարի 40-60-ական թթ. հայ բանաստեղծությունը՝ իրոք նկատում ենք նմանատիպ միտումների առկայություն (Ս. Զարյան, Գ. Սարյան, Ս. Տարոնցի, Յ. Շիրազ, Յ. Սահյան, Ս. Կապուտիլյան, Գ. Էմին, Վ. Դավթյան, Յ. Հովհաննիսյան և ուրիշներ): Եվ, իհարկե, նոր ասելիքի ու ձևերի որոննան, ինչպես նաև ընթերցողական նոր ճաշակի ձևավորման ճանապարհին շատ շուտով (արդեն 50-ական թթ. կեսերից) առաջամարտիկի դերն ստանձնում է Պարույր Սևակը: Ինչպես իրավացիորեն նկատել է Դ. Գասպարյանն իր «Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը» ուսումնասիրության մեջ, «Պ. Սևակը դարձավ պոետական նոր խմորվող հնարանքների ամենալայն կիրառողն ու զարգացնողը: Նա զգաց, որ հարկավոր է պեղել, հայտնաբերել ժամանակի պոեզիան և ոչ թե նստել ու նախվ, հայեցողական, թեկուցև անկերծ ներշնչանքով տողեր շարակարգել: Բանաստեղծական նոր ստեղծվող որակի կազմավորման գործում **նա դարձավ իր սերնդի հետախույզը, թիւ անց՝ նրա առաջամարտիկը, և ապա նրա դրոշակակիրը:** Ամեն քայլափոխի նկատելի է նրա որոնումը, որն աստիճանաբար ներսից խարխլում է բանաստեղծության ընկալման կայունացած սկզբունքները և նոր մղում տալիս հասարակական ճաշակին»<sup>2</sup>:

Տերյանական և չարենցյան պոեզիայի ձևերի բազմազանությունն այս շրջանում փոխարինվում է կյանքի նոր ռիթմների ներմուծմամբ, բովանդակության բարոնությամբ և բազմազանությամբ: Պարույր Սևակի դիպուկը բնութագրման՝ բանաստեղծության մեջ արդեն կարևորվում են «ոչ թե երգային մտածողությունը, այլ համանվագայինը (սիմֆոնիզմը)», ինչպես նաև «բազմաձայնությունը», որոնք բխում են առաջին հերթին ժամանակի պահանջներից և արդի մարդու հոգեկան առավել բարդ կերտվածքից: «Եվ անհամեստություն կիամարվի, - շարունակում է բանաստեղծն իր միտքը, եթե ասեմ, որ այսօրվա մարդը առավել բարդ կառուցվածք ունի, քան Դանեմարքայի արքայազնը»<sup>3</sup>:

Պարույր Սևակը բազմիցս խոսել է ոչ միայն նոր պոետական բովանդակության, այլև նոր տաղաչափական ձևերի, այդ թվում և ստրոֆիկական կառուցների որոնման անհրաժեշտության մասին: 1967 թ. գրած նամակներից մեկում նա ասում է, որ բանաստեղծի «գործը ոչ միայն լավ բան ասելն է, այլև լավ ասելը... Բայց լավ ասել չի նշանակում ասել անպայման քառյակով (այսուեղ Պ. Սևակը նկատի ունի ընդհանրապես բանաստեղծական տունը և հատկապես քառասող տունը - Ա. Զ.) և հանգավոր: Քայլակը (հանգի հետ մեկտեղ, գումարած լավ նմանաձայնություն-քառախառները, որոնց սիրահարն են ես էլ) հաճախ ստիպում է ասել մաշված ու շփված բաներ, ավելորդ կրասնություն ու ազատ միտքը: Այսպիսով, Սևակը խոսում է ավանդական տնային ձևերից հրաժարվելու անհրաժեշտության մասին, ձևեր, որոնք, ըստ նրա, կաշկանդում են բանաստեղծական երևակայությունն ու ազատ միտքը: Այս մտայնությունը գալիս էր նրանից, որ Սևակը փորձում էր հաղթահարել բանաստեղծական պատկերավորման հնաող ձևերը, կանոնական կշռույթներն ու կառուցները և հետևել սե-

<sup>2</sup> Պ. Գասպարյան, Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Եր., 1979, էջ 302:

<sup>3</sup> Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5, Եր., 1974, էջ 259:

<sup>4</sup> Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 6, Եր., 1976, էջ 436:

փական բանաստեղծական երևակայության թելադրանքին: Եվ այս միտումները Սևակի պոեզիայում հետզիետե խորանում են:

Սակայն կարծել, որ կայուն ձևերից և տնային կառուցյներից Սևակն իսպառ երես էր թեքել, իհարկե, սխալ կլինի: Նախապատվություն տալով ապատնային ոտանավորին՝ նա բավական հաճախ դիմում է նաև այսպես կոչված «ապարգ տներին», իիմնականում քառատողերի և հնգատողերի, երբեմն նաև երկտողերի, շատ ավելի հազվադեպ՝ եռատողերի: Պ. Սևակի կողմից այսպիսի տների կիրառումը գերազանցապես բխում էր տվյալ ասելիքի ամփոփությունից և կառուցիկությունից, այն դեպքում, երբ ապատնային ձևերն առավել հաճահունչ էին խոսքի ու մտքի ավելի հախուռն դրսերումներին: Ֆիշտ է, ընդհանուր առմամբ կանոնավոր տները Պ. Սևակի պոեզիայում շատ ավելի փոքրաթիվ են՝ համեմատած աստրոֆիկ ձևերի հետ, սակայն, այնուամենայնիվ, դրանք գուգահեռ և հավասար իրավունքով գոյատևում են նրա պոեզիայում: Եթե կանոնական տներն ավելի մեծ թիվ են կազմում բանաստեղծի վաղ շրջանի ժողովածուներում՝ «Անմահները հրամայուն են», «Սիրո ճանապարհ», «Նորից քեզ հետ», ապա տնային կառուցյների ակտիվ ժխտումը վերաբերում է ստեղծագործական կյանքի ավելի ուշ շրջաններին (պատահական չէ, որ վերոնշյալ նամակը գրված է 1967 թ.):

Այնուհանդերձ, մեզ հետաքրքրում է նաև, թե ինչ վերաբերմունք ուներ Սևակը բանաստեղծության այնպիսի կայուն ձևերի հանդեպ, ինչպիսիք են սոնետը, տրիոլետը, գագելը և այլն, որոնք այնքան կարևոր տեղ էին գրավում Տերյանի և Չարենցի բանաստեղծական համակարգում: Հետաքրքիր է, որ կանոնական ձևերից հրաժարվել ձգտող բանաստեղծը 1950-ական թթ. (ավելի ճշգրիտ՝ 1956 թ.) գրում է բազմաթիվ ութնյակներ, որոնց մի մասը գետեղված է «Նորից քեզ հետ» ժողովածուում և «Մարդը ափի մեջ» գրքում՝ իբրև առանձին բաժին, իսկ մյուս մասն էլ դուրս է մնացել շարքերից և տպագրված է Պ. Սևակի երկերի VI հատորում: Ութնյակի ավանդույթը մեզանում ձևավորվել է Ե. Չարենցի պոեզիայից՝ նրա նշանավոր «Ութնյակներ Արևին» շաքրից, որը գրվել է 1921 թվականին<sup>5</sup>: Պ. Սևակը թեմատիկ առումով շեղվել է չարենցյան ավանդույթից՝ ութնյակներ գրելով ժողովրդական առածների և ասացվածքների հիման վրա և տալով դրանց անձնական ու արդիական յուրօրինակ հնչեղություն: Սևակի ութնյակները գրված են համեմատաբար ազատ հանգավորմամբ, թեպես նկատվում է մի հստակ միտում. նա հիմնականում ձգտում է հանգավորել II, IV և VIII տողերը միմյանց հետ, այնինչ Չարենցի ութնյակներում հանգավորման բոլորովին այլ սկզբունքներ ենք տեսնում:

<sup>5</sup> Դայտնի է, որ Չարենցը դրանք նախապես ցանկացել է անվանել տրիոլետներ: «Յիմա ես տրիոլետներ եմ գրում, - հաղորդում է նա 1921 թ. հունիսի 18-ին գրած իր նամակներից մեկում: - «Տրիոլետներ - Արևին» (Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1967, էջ 375): Սակայն էլ ո՞վ, եթե ոչ Չարենցը, լավագույն գիտեր, թե իրականում ինչ է տրիոլետը (հենց այդ նույն 1921 թ. նա արդեն գրել էր «Տրիոլետներ Արփիկին» և «Տրիոլետ Լ. Բ.-ին»), իսկ Արևին ծոնված տասնվեց բանաստեղծություններից ըստ եռյան միայն մեկն է իսկական տրիոլետ («Ինչպես շոգ, ճնշող ուսկի...»): Եվ սա է, իհարկե, պատճառը, որ Չարենցն այդ շաքրը անվանել է ոչ թե «Տրիոլետներ», ինչպես նախնական մտահղացումն էր, այլ «Ութնյակներ»՝ իհմք ընդունելով բանաստեղծությունների տողաքանակը:

Սոնետը, որն առավել կանոնական ձև է և պահանջում է հստակ մշակվածություն ու հատուկ վերաբերմունք, թվում է, պետք է առհասարակ դուրս մնար բանաստեղծական հախուռն երևակայություն ու մտքի գերարագ ընթացք ունեցող Սևակի պոեզիայից: Սակայն, որքան էլ զարմանալի է, նա իր ուժերը փորձել է նաև բանաստեղծական այս ձևում՝ ստեղծագործական կյանքի վաղ շրջանում գրելով 40 սոնետից բաղկացած նի ամբողջ շարք, որոնցից մեզ հասել է 38-ը: Միանգամից նշենք, որ այդ սոնետները, իհարկե, գեղարվեստական բարձր արժեք չունեն և անպայմանորեն կրուն են բանաստեղծի անփորձության կնիքը: Սա է, անշուշտ, պատճառը, որ դրանք ընդգրկված չեն Պ. Սևակի երկերի վեցհատորյակուն և միայն 1985 թ. լույս են տեսել «Մուտք» վերնագրով ժողովածուում, որը պարունակում է տասնութ-տասնիննամյա բանաստեղծի հիմնականուն անտիպ նի շարք երկեր ու նամակներ<sup>6</sup>: Այնուհանդերձ, այդ սոնետները հետաքրքիր և արժեքավոր են Պ. Սևակի պոետական որոնումների ընթացքը բացահայտելու առումով: Դենք միայն այն հանգամանքը, որ նա դիմել է սոնետի կայուն ձևին, ինքնին արդեն հետաքրքիր է և մեկ անգամ ևս վկայում է մեր պոեզիայի դասական շրջանի, հատկապես Տերյանի և Չարենցի հետ Սևակի ծագումնաբանական խոր կապվածության մասին: Թեմատիկ առումով այդ սոնետները բավկան բազմազան են. նախ և առաջ, այդտեղ կա ժամանակի իրադարձությունների անմիջական արձագանքը: Գրված լինելով 1941 թ. օգոստոսին, այսինքն՝ Հայրենական պատերազմի սկզբից ընդամենը օրեր ամց բանաստեղծն իր պոտքուն ատելությունն է հրում պատերազմը սանձագերծողներին.

*Լոյր, ամսուն ու շրջմոլիկ քամի,  
Երգ իմ, սուրա՛ քամու թևով, անցիր  
Մայր ցամաքներ, օվկիանոսներ անծիր  
Գիշերային այս խաղաղված պահին:*

*Եվ քույր դարձած անօթևան քամուն  
Դողմաղացները աշխարհի շարժիր,  
Որ ֆաշիզմը աղանք պինդ ու ամուր...<sup>7</sup>*

Սակայն սոնետը՝ որպես բանաստեղծության կայուն ձև, առավել հակված է դեպի անձնական և փիլիսոփայական թեմատիկան, և քաղաքացիական պարուս կարծես համահունչ չէ նրա քնարական բնույթին: Սա է թերևս պատճառը, որ Սևակն իր սոնետների շարքում նույնպես հակվուն է դեպի քնարական խոհերն ու տրամադրությունները, փիլիսոփայական մտորումներն ու անձնական կյանքի դրվագների իմաստավորումը.

*Ու խեղդում են ինձ խոհեր անդեմ ու անկերպարանք.  
- Ինչո՞ւ է կյանքը, երբ ցավը պիտի միշտ մոլեզմի,  
Եվ մահը մինչև ե՞րբ պիտի մեզ միշտ հեզմի...*

<sup>6</sup> Տե՛ս Պ. Սևակ, Մուտք, Եր., 1985:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 88:

*Բայց ժամ անց ցավը անցնում է անհետ, ըշտապ.  
Ժպտում է պապրս, կատակում - ձայնով դեռ զիլ հնչում...  
- Օ՛, Մայր Բնություն, անտանջանք կյանքը սուգ է, Ողջույն:  
(«Մուտք», էջ 102-103)*

Այս շարքում տեղ են գտել նաև սոնետներ՝ ձոնված Յայաստանին, բիբլիական Արարատին, մայր բնությանը: Սոնետներից երեքը նվիրված են Պետրոս Դուռյանի հիշատակին. դրանցում արտահայտված են պատանի բանաստեղծի անկեղծ մտորումները՝ Զարենցի ակնհայտ ազդեցության շերտերով.

*Օ՛, որքա՞ն ցավեր ու կսկիծ է ամբարել,  
Օ՛, որքա՞ն նրանուրբ, որքան խո՞ր ու խորունկ,  
Այս հիվանդ, միսացող պատանին հանճարեղ...  
(«Մուտք», էջ 75)*

Պետք է նշել, որ սոնետի հանդեպ Պ. Սևակի հետաքրքրությունը արդեն որոշակիորեն յուրացված սկզբունքների արդյունք էր. նա ծանոթ էր սոնետի հանգավորման և կառուցման դասական եղանակներին, որի մասին լավագույնս վկայում են նրա գործերը: Սևակը կիրառում է սոնետի այսպես կոչված «հիտալական» տարրերակը, որտեղ քառատողերը հանգավորվում են օղակածն, իսկ եռատողերն ունեն երեք հանգ՝ դասավորված տարրեր եղանակներով: Նշենք, որ սոնետի այդ տարրերակն էին նախընտրում նաև Տերյանն ու Զարենցը: Յատկանշական է, որ շարքի 38 սոնետներն էլ, ինչպես նաև 1942 թ. «Սովետական գրականություն» ամսագրի 8-րդ համարում տպագրված «Պատերազմի դաշտում զոհվածներին»<sup>8</sup> սոնետը կառուցված են օղակածն հանգավորված քառատողերով. դա այն ձևն է, որը Տերյանը անվանում էր «հսկական սոնետ»: Բացի այդ, Սևակը հաճախ է կիրառում նաև իգական հանգեր, որոնց ավանդույթը նա ակնհայտորեն «փոխ է առել» Զարենցից, և որոնք յուրօրինակ բազմազանություն են հաղորդում բանաստեղծական խոսքին.

*Արևմուտքը ահա... Ուր մարում է լույսը,  
Ուր մարում է հավես արեգակը լուսե,  
Ուր խավարը մթին իր շղարշն է հյուսել,  
Ուր մեռնում է կյանքի վերջին, վերջին Յույսը:  
(«Մուտք», էջ 106)*

Ինչ վերաբերում է սոնետների տողաչափերին, ապա պետք է ասել, որ Սևակը կիրառել է ամենատարբեր չափեր՝ 8 (4+4), 9 (3+3+3), 10 (5+5), 10 (4+6), 11 (4+4+3), 11 (6+5), 12 (4+4+4), 12 (6+6), 13 (5+5+3), 14 (5+5+4), 15 (4+4+4+3), 15 (5+5+5), ընդ որում՝ այստեղ հայկական ոտանավորին բնորոշ ավանդական տողաչափերի հետ մեկտեղ երիտասարդ բանաս-

<sup>8</sup> Այս սոնետը տպագրվել է Պ. Սևակի երկերի վեցհատորյակում (տես հ. 6, էջ 16):

տեղիք օգտագործել է նաև շատ ինքնատիպ ձևեր, որոնք հաճախ հնչում են մի փոքր անսովոր, բայց, այնուհանդերձ, ինքնատիպ են ու նորաբույր: Ակնհայտ է, որ Երիտասարդ Սևակն արդեն թևակոխել էր նոր տաղաչափական ձևերի և արտահայտչամիջոցների որոնման ուղի, որը դառնալու էր նրա բանաստեղծական հիմնական հավատամքը:

Եվ վերջում մի կարևոր հավելում. Սևակի հետաքրքրությունը սոնետի հանդեպ չի մարում նաև 50-ական թթ.: Թերևս քչերն են նկատել, որ «Նորից քեզ հետ» ժողովածուի լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Եկ հպարտ մնանք»-ը (1956), նույնական սոնետ է, որի մասին վկայում է և բանաստեղծության հանգավորումը, և մանավանդ գծապատկերային բաժանումը՝ 4+4+3+3+1: Սա սոնետի հասոուկ տեսակ է՝ պոչավոր սոնետ, որի ավանդույթը մեզանում իր լավագույն դրսերումներն է ունեցել Մեծարենցի պոեզիայում: Նա տվել է սոնետի այդ տեսակի ամենափայլուն ու դասական օրինակները: Պոչավոր սոնետում առաջին տողը կրկնվում է իբրև վերջին՝ 15-րդ տող՝ որոշակի փոփոխություններով և արդեն նոր իմաստային հնչեղությամբ: Սկզբում դրվող թեման աստիճանաբար ծավալվում է՝ հասնելով նոր որակական աստիճանի, և վերջում հնչում իբրև եզրափակիչ ակորդ: Այդպիսին է նաև Սևակի «Եկ հպարտ մնանք»-ը:

*Մեզ վիճակվեց - և մենք հանդիպեցինք կյանքում:*

Այսպիսի լավատեսական տրամադրությամբ է Սևակն սկսում իր բանաստեղծությունը: Սակայն սիրող հոգիներին վիճակված չէ ապրել կողք կողքի. այս միտքն է ծավալվում հետագա տողերում և իր տրամաբանական ավարտին հասնում վերջին՝ 15-րդ տողում:

*Եթե վիճակվել է չվիճակվել իրար...<sup>9</sup>:*

Այսպիսով, Պ. Սևակի պոեզիային խորք չեն կանոնական տներն ու բանաստեղծության կայուն ձևերը, ինչպես կարող է թվականը առաջին հայացքից: Դրանք առավել գործուն են ստեղծագործական կյանքի առաջին շրջանում, երբ բանաստեղծը թե՛ բովանդակության և թե՛ ձևի առումներով սերտորեն կապված էր հայ դասական պոեզիայի լավագույն ավանդույթներին:

**АШХЕН ДЖРБАШЯН – Твердые стихотворные формы в поэзии Паруйра Севака.** – После В. Терьяна и Е. Чаренца в восточноармянской поэзии менялось отношение к строфическим, а также твердым стихотворным формам (сонет, триолет, газель и т. п.). Отказ от них был тесно связан с новым содержанием, которому традиционные формы не соответствовали. Аналогичные тенденции наблюдались и в русской поэзии того времени. Армянская поэзия 40–60-х годов XX века отмечена новыми ритмами и подходами. Как говорил Паруйр Севак, на первый план выходило “не песенное, а симфоническое мышление”, а также “полифонизм”; они полнее раскрывают сложный строй души современного человека. Севак утверждал, что необходимо отказаться от строфических и твердых форм, и хотя нередко обращался к “простым строфам”, их удельный вес в его творчестве по сравнению с астрофическими формами весьма скромен. Знаменательно, однако, что в 1956 г. поэт создал множество восьмистиший. Сонет – каноническая по

<sup>9</sup> **Պ. Սևակ,** Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 1, Եր., 1972, էջ 249:

суги форма – тоже нашел место в его творчестве. До нас дошел большой – из 38 сонетов – цикл, написанный юным стихотворцем в начале 1940-х годов. В нём преобладает гражданский пафос, хотя сонет, как известно, тяготеет скорее к любовному и философскому жанру. Севак использовал так называемый итальянский сонет, которому отдавали предпочтение также Терьян и Чаренц. Не угас интерес Севака к сонету и в 50-е годы. Таким образом, канонические формы и привычная строфики не чужды поэзии Севака. Наиболее активно применявшимся на ранних этапах его творчества, они органически связаны с традициями классической армянской поэзии.

**ASHKHEN JRBASHYAN – *The Firm Poetical Forms in the Poetry of Paruyr Sevak.*** – The attitude to strophic forms and such constant forms as sonnet, triolet, ghazel etc was changed in Eastern Armenian poetry after Vahan Teryan and Yeghishe Charents. Refusal from these forms was connected with new contents, which were searching more “neutral” forms of expression. These phenomena were closely connected with analogical tendencies of Russian poetry of that period. The new rhythms and various forms predominated in Armenian poetry in the 40-60-ies of the XX century. Paruyr Sevak said that “symphonic mentality” as well as “polyphony” became more significant in the new poetry. They were expressing the more complicated system of the soul of modern human being. Sevak also spoke about the necessity of denying the strophic and constant forms and he himself was using the so called “simple stanzas”, though in general the latter are quite few in his poetry as compared to non-strophic forms. The article shows the place of such constant forms as sonnet, triolet etc in Sevak’s poetry. Eventually, the poet who had declared refusal of canonical forms, in 1956 created plenty of octaves. Sonnet (a more canonic form) also found its place in Sevak’s poetry. A whole cycle of 38 sonnets written in the early forties have reached us. Civil pathos prevails in his sonnets, though the sonnet itself, as it is already known, is more inclined to private and philosophical themes. Sevak uses the “Italian” form of sonnet. Teryan and Charents also preferred the same form of sonnet. Sevak’s interest to the sonnet did not fade away in the fifties. In this way the canonic and constant forms are not alien to Sevak’s poetry. They are more frequent in his early period and are organically connected with the traditions of classic Armenian poetry.